ՆՈՐ-ԴԱՐ

№ 161 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Ուրբաթ, 17 Սեպտեմբերի 1893 Ուրբաթ, 17 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 161

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ դրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
или Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., րնկերմների համար կրկնապատիկը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Նոեմբերական հանգէսը։
Քրոնիկոն.— Էջմիածնից։ Երեւանից։ Ուսուցիչները Կաթողիկոսի օծման հանդէսին։ Հայ դերաս. խմբի առաջին ներկայացումը։ Բագուից։ Կարգապահութիւն երրորդ գիմնազիոնում։ Նաւթարդիւնաբերողների համագումարը։ Գրաւացկու ուղեւորութիւնը Բագու։ Հոգեբաժնութեան կանոնադրութիւն։ Մի ընտանեկան ժողով։ Զմիւռնիայի հայոց դպրոցների տեսչի պաշտօնը։ Վիճակագրական տեղեկութիւններ։ Օքրոպակերատից։ Թ. Աբովեանի յիշատակին նուիրուած գումարների քանակը։
Ռուսիայի թերթերից։
Խաչատուր Աբովեան։
Մարդկութեան միութիւնը։
Թղթակցութիւններ.— Բագու։ Նոմակ Գարսկաստանից—Թաւրիզ։
Բաղաքական.— Զօրախառերն Աւստրիա-Ունգարիայում։
Քաղաքական լուրեր։
Հեռագրեր։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 16 սեպտեմբերի, 1893 թ.

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ.

Մի քանի օր ևս, և ալևոր Մասիսի ստորոտում՝ Միածնի իջած սրբազան տեղում մի նուիրական հանդէս կրկատարուի— Աստուածընկիր Հայրապետի Օծման հանդէսը։ Ի սփիւռս աշխարհի տարածուած Հայերի աչքն այդ օրը դարձած կրլինի դէպի Մայր Աթոռը. ամենքը կրցանկան ներկայ լինել համազգային այդ Մեծ Տօնին, համբուրել Լուսաւորչի արժանաւոր ծառանգի Աջը, համբուրել այն սրբազան վայրերը, որտեղ Գրիգորեանք, Ներսիսեանք և Սահակեանք Հայրենասիրութեան և եկեղեցասիրութեան փառաւոր կոթողներ են կանգնել։

Այսօր Համայն Հայութիւնը լցուած է մի զգացմունքով, ոգևորուած է մի մտքով, Համայն Հայութեան աչքը դարձած է դէպի մի կէտ, մի նպատակ, դէպի Մայր-Աթոռը։ Ազգային պատմութիւնը չի թողել մեզ մի աւելի ուժեղ փաստոր, որ ցրուած անդամներին իրար հետ միացնելու, իրար հետ կապելու այդպիսի մեծ բարոյական ոյժ ունենար, ինչպէս Հայրենի եկեղեցին։

Դա փաստ է, որը չի տեսնում ժամանակիս մոլորուած միտքը, բայց որին մատնացոյց են լինում պատմութիւնը, անցեալն ու ներկան և խուլերին անգամ լսելի ձայնով գոչում. «Ի վերայ Աջոյն և Լուսաւորչի Հաստատեալ կայ ամենայն ազգն Հայոց»։ Ողբերգակ վարդապետի այդ վճիռը պատմութեան սրտից բղխած ձայնն է։

Ի՞նչ բան կարող կրլինի մեզ ցոյց տալ մի այնպիսի հոգեպարար Հանդէս, որպիսին կրկատարուի Էջմիածնում սեպտեմբերի 26-ին։ Այդ օրը Վեհափառ Հայրապետի հրամանով կրկատարուի կաթողիկոսական ս. Օծումը։ Ամեն անկիւններից, ուր Հայ կայ, կրժողովուին այնտեղ կանանց և տղամարդկանց, ծերերի և երիտասարդների, հարուստների և չունեւորների, գիւղացիների և քաղաքացիների ահագին բազմութիւն։ Կրտեսնուեն իրար հետ, կրտեղեկանան միմեանց վիճակից, սիրոյ համբոյրներով բարեւի և հրաժեշտի ողջոյններ կրտան և վանքի զանգակների ներդաշնակ զանգահարութեամբ միևնոյն լեզուով, միևնոյն աղօթքը կրմրմընջան. նախ՝ «միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազանց» և ապա՝ «երկար կեանք Վեհափառ Հայրիկին»։

Որքան խորհրդաւոր Հանդէս, որ ստեղծում է ազգային եկեղեցին, ս. Էջմիածինը։

«Ի վերայ Աջոյն և Լուսաւորչի Հաստատեալ կայ ամենայն ազգն Հայոց»։

Ա Զ Գ

Տարուայ վերջին քառորդին մօտենալով՝ խնդրում ենք մեր այն բաժանորդներից, որոնք դեռ չեն հատուցել իրենց բաժանորդավճարը—և նրանք, որոնց վրայ անցեալից ապառիկներ են մնում—բարեհաճեն յիշել իրենց պարտքը և ուղարկել։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԷՋՄԻԱԾՆԻՑ ամսոյս 14-ից հեռագրով հաղորդում են մեզ, որ Նորին Վեհափառութիւնն արդէն բացել է իւր դիւանը և գործավարներ է նշանակել։ Գերապատիւ Գէորգ եպիսկոպոս Սուրենեանը և գեր. Գրիգոր եպիսկոպոս Աղաֆիրեանը հրաժարականներ են ներկայացնում Նորին Վեհափառութեան, իրենց թեմերից հրաժարուելու համար։ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը նոյնպէս պատրաստում է հրաժարական Նորին Վեհափառութեան մատուցանելու ճեմարանի տեսչութիւնից հրաժարուելու համար։ Այսօր արդէն հեռագրով յայտնուեցաւ, ինչպէս մամուլին նոյնպէս և թեմերում մնացող առաջ նորդներին Նորին Վեհափառութեան Օծութեան օրը։ Վերջիններս հրաւիրուում են նշանակեալ օրը, այն է սեպտ. 26-ին, Վաղարշապատ, Խաչի տօնին պատրաստ լինել ս. Էջմիածնում։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեր թղթակիցը սեպտեմբերի 15-ից հետևեալ տեսուր նորութիւնն է հաղորդում.

«Այսօր տեղւոյս յայտնի արժ. Կիրեղ վարդապետը տեղեկութիւն ստացաւ, որ երկու օր սրանից առաջ անյայտ չարագործներ՝ մտնելով Երևանի վիճակում գտնուող Հաւուց թառայ վանքը՝ սրով մորթել են վանահայր Ներսէս վարդապետին, նրա տնտեսին և ծառային և անկողիններում փաթաթելով այրել են։ Սպանուածների մարմնի չայրուած տեղերի վրայ նշմարւում են դաշոյնի հարուածի տեղեր։ Ջարագործները վանքի ոչ մի ստացուածքին ձեռք չեն տուել և ինչպէս երևում է, չարագործութիւնը վրէժխնդիր լինելու նպատակով է արուած։ Ջարագործները գտնելու համար միջոցներ են ձեռք առնուած։

—

Որպէս զի Վեհափառ Կաթողիկոսի օծման հանդիսին ներկայ լինել ցանկացող ուսուցիչները միջոց ունենան գնալու, ցանկալի էր, որ մեր դպրոցների վարչութիւններն այդպիսիներին մեկ տասն օրով արձակուրդ տային։ Այդպիսի հազուադէպ եկեղեցական հանդիսից չպէտք է զրկել ուսուցիչներին, քանի որ այժմ քան երբ և իցէ ուելի կարիք կայ մեր հոգևոր դպրոցների ուսուցիչների մէջ զարթեցնել եռանդ դէպի այն եկեղեցին, որի հովանաւորութեան տակ նրանք գործում են։

—

Սեպտ. 19-ին հայոց գերասանական խումբը պիտի ներկայացնէ Պենիմէճեանների մասնակցութեամբ «Երկու Որբ» մելոդրամը։ Պենիմէճեան ամուսիններն իրենց դէբիւտի համար այդ պիեսն են ընտրել։

Ասում են, որ Պոլսից հրաւիրուած այդ դերասանները չատ լաւ են խաղում. տիկին Պենիմէճեանի համար ասում են, որ ընտիր սուբրետ է։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Նոր ծրագրուած նաւթային ակցիօներական ընկերութիւնը, որի նախաձեռնութիւնը պատկանում է պարոն Պ. Օ. Ղուկասեանին և որին մասնակցում են բոլոր նաւթագործարանատէրերը, թուով 90, սեպտեմբերի 8-ին ժողով էին կազմել և ընտրել են պատգամաւորներ, որոնք չուտով պիտի ուղևորուեն Պետերբուրգ՝ իրենց ծրագիրը ներկայացնելու ֆինանսների մինիստրին ի հաստատութիւն։ Նոր կազմուելիք ընկերութեան ծրագրին նայած, չուտով նաւթային աշխարհում մեծ փոփոխութիւններ պիտի կատարուեն և ընկերութեանը մեծ ապագայ է խոստանում. Ցոյս ունիմ, որ ապագայում կարողանամ «Նոր-Դար»-ի ընթերցողներին մի համառօտ տեղեկութիւն տալ այդ ընկերութեան ծրագրի մասին։

—

Թիֆլիսի երրորդ գիմնազիոնի վերատեսուչ պ. Մարտինովսկին գիմնազիոնի աշակերտներին խրատական յորդորներ կարդալիս կարգադրել է, որ աշակերտները վաղորդայն հանդիսելիս պէտք է ողջունեն երկրիս Կառավարչապետին, նրա օգնականին, նահանգապետին, ևթէ ճանապարհին և սրա օգնականին. նոյնպէս կովկասեան չրջանի դպրոցների հոգաբարձու նանովսկուն տեղը կանգ առնելով պարտաւոր են ողջունել։ Նոյնպէս պարտաւոր են ողջունել հայոց թեմական առաջնորդին և ս. էջմիածնում։

Ցիշեալ գիմնազիոնն առանձնապէս աչքի է ընկնում իւր կարգապահութեամբ։

Նոր կարգադրութեամբ արգելուած է դոյն գիմնազիոնի աշակերտներին երեկոյեան ժամը 7-ից յետոյ երևալ փողոցներում, իսկ Մուչայիդի այգում կարող են լինել մինչև արեգակի մայր մտնելը միայն, այնուհետև ոչ ոք իրաւունք չունի մնալու այնտեղ. դրա համար էլ առանձին վերակացու է նշանակուած։

—

Թուրքաց կառավարութիւնը Բաթումից ուղևորուող նաւերի համար նշանակած կարանտինը 10 օրից իջեցրել է 5 օրուայ։

—

Նաւթ արդիւնաբերողների համագումարը Պետերբուրգում, մայրաքաղաքի թերթերի ասելով, բացուելու է սեպտեմբերի 29-ին։

—

Սեպտեմբերի 14-ին Թիֆլիսից Բագու ուղևորուեց Կովկասեան բժշկական վարչութեան կառավարիչ Գլաւացկին։

—

Թիֆլիսի դատական պալատի քաղաքացիական 2-րդ դեպարտամենտին կից չուտով, ինչպէս լսել է «Кав.»-ը, մի առանձին կանցելեարիա է հիմնուում, որ պիտի վարէ բացառապէս հողերաժնութեան վերաբերեալ գործերը։

—

Վերջին տարիներումս Զմիւռնիայի հայոց դպրոցների տեսուչը ալէքսանդրապոլցի պ. Յովհաննէս Տէր-Միրաքեանն էր, որ Գերմանիայում սովորել և լսել է մանկավարժական դասախոսութիւններ։

Ցիշեալ պարոնն այլ ևս Զմիւռնիայի հայոց դպրոցների տեսուչ չլինելով, նրա տեղը պարապ էր մնացել։

Այժմ ինչպէս իմանում ենք, իրեն Տէր-Միրաքեանին յաջողուել է յիշեալ պաշտօնի համար հրաւիրելու պ. Նիլչէ Մադաթեանին, որ արդէն ուսուցչական պաշտօն է վարում մեր Ներսիսեան հոգևոր դպրանոցում։ Պարոնը համաձայնուել է գնալ Զմիւռնիա, որի համար Զմիւռնիայից ուղարկուած ճանապարհածախսը «Նոր-Դար»-ի հասցէով ստացուեց։

Այս առթիւ ցաւով պիտի յայտնենք, որ մեր երկրի մանկավարժութիւնը Զմիւռնիայում ապարդիւն է անցնում, թէպէտև մենք մեծ հաւատով էինք վերաբերւում դէպի այդ գիտութիւնը։

Պոլսի և Զմիւռնիայի լրագրերը և մեզ հասած տեղեկութիւնները հաստատում են այդ։ Ինչպէս երևում է գերմանական այնքան գոված և յարգուած մանկավարժական գիտութիւնն այն բոյսերից է, որ ամեն տեղ չի կարելի ցանել. գուցէ այդ հողի բնաւորութիւնից է կամ պարտիզպանի խամութիւնից։

—

Էրզրումի վիլայէթի մասին «Кав.»-ի մէջ, ի մէջի այլոց, հետևեալ վիճակագրական տեղեկութիւնները են հրապարակուած, որոնք քաղուած են մօտաբակուած, որոնք քաղուած են մօտերքս լոյս տեսած պաշտօնական 1892 թ. «Սալնամէ» *) տեղեկագրից։

*) Թիւրքիայում իւրաքանչիւր վիլայէթի կեդրոնական վարչութիւնը պէտք է տպագրէ իւր հաշիւները ներքին կառավարութեան բոլոր ճիւղերի մասին. այդպիսի հաշիւների ժողովածուները կոչւում են «Սալնամէ»։

Էրզրումի վիլայէթը վարչական տեսակէտից բաժանւում է երեք սանջակի —Էրզրումի, Բայազէթի և Էրզինջանի. ունի 18 գաւառ և 170 վիճակ, որոնց հետևեալ կերպով է բաբեհաճում բաժանել պաշտօնեան տեղեկագիրը։

Էրզրումինը	— 9	գաւ. 121	վիճ.
Բայազէթինը	— 5	» 18	»
Էրզինջանինը	— 4	» 31	»

Ամբողջ վիլայէթումբնակիչների թիւն է 571950, որոնք ըստ ազգութեան և կրօնի բաժանւում են հետևեալ կերպով.

Մահմետական	— 445074	հոգի.
Հայադաւան	— 108502	»
Հայ-կաթոլիկ	— 6700	»
Հայ-բողոքական	— 1975	»
Յոյն — — —	3232	»
Հրէայ և ուրիշ ազգ.	6422	»

Էրզրումի վիլայէթում կայ 696 մզկիթ, 300 եկեղեցի և վանք, 1 գիմնազիական և 1 քաղաքացիական գիմնազիոն, տղայոց 7 և օրիորդաց 1 պրոգիմնազիոն, տղայոց պետական 27 և աղջկանց 2 տարրական ուսումնարան, 336 մեդրեսէ, 697 մանուար մեքթեբէ, 7,153 խանութ և 27 գիւեղուն։

Մի տարուայ մէջ վիլայէթին եկամուտ ունեցել է ընդամենը 25,538,857 պիաստր, իսկ ծախք—7,842,479 պիաստր։

Էրզրումի պետական հաստատութիւնների մէջ վարչական անձերի թիւն անցեալ տարի եղել է 324, որից 15 հոգի միայն հայ է եղել, մինչդեռ 10—15 տարի առաջ պաշտօնեաների առնուազը $^1/_8$ մասը հայերն են եղել կազմելիս։

—

ՕՔՐՈՊԱԿԵՐՏԻՑ (Շաւկեթի գաւառ).— Օգոստոսի 22-ին պաշտօնապէս եկաւ վիճակիս գործակալ արժ. Յովհաննէս քահանայ Նայեանցը ուսումնարանի մասին եղած այս երկու տարուայ տարաձայնութիւնը վերջացնելու։ Նոյն օրն՝ ևբրեկոյեան ժամից յետոյ՝ ժողով կազմից Ս. Աստուածածին եկեղեցու բակում, ուսումնարանի վերնայարկում, ուր ներկայ էին գիւղական հասկացող մարդիկ. ներկայ էր և նախկին հոգաբարձութիւնը։ Ժողովը երկու ժամ պարապեցաւ նոր հոգաբարձուների ընտրութեամբ։ Ձայների բազմութեամբ ընտրուեցան պ. պ. Նազարէթ Այվազեանց և անձնափոխանորդ Պետրոս Պողոսեան Տէր-Յարութիւնեանց։ Հետևեալ օրը կազմուեցաւ հոգաբարձական նիստ արժ. գործակալի նոխազահութեամբ։ Նիստը զբաղուեցաւ առաջիկայ տարուայ ուսումնարանական գործերով, ուր որոշուեցաւ թեմական տեսչին դիմել հեռագրով մի ուսուցիչ խնդրելու։

—Այս տարի Օքրոպակերտն և իւր չրջակայքը չնորհիւ երաշտի կենսական բոյսերից զրկուեցան։ Ահա երկու ամիս է, որ տակաւին երաշտը չարունակւում է։

— Տարափոխիկ հիւանդութիւնները չատացան թէ Օքրոպակերտում և թէ իւր չրջակայ գիւղերում։

—

Խաչատուր Աբովեանի յիշատակը կենդանի պահելու նպատակին նուիրած ունէինք 1,313 ր., 40 կ.. Այդ գումարի վրայ ավելացնելով Խասաւ-Իւրթից պ. Ա. Նալբանդեանի ուղարկած 11 ր., այժմ ունինք ընդամենը— 1,324 ր., 40 կ.։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏԱՄԱՆԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԸ

Ընդհանրական խորհրդի

Մեր ստույգ թվաքննությամբ Նիկոմիդիոյ հայոց թեմական տասնչորս վարժարանները ի տարի ունին հետևեալ աշակերտութիւնը. Ս. Նշան վանական վարժարանը 50 ուսանող, Ս. Աստուածածին վարժարանը 50 ուսանող, Ս. Գրիգոր Լուսաւորչի վարժարանը 50 ուսանող, Ս. Կիպրիան Նահատակի վարժարանը 50 ուսանող, Ս. Յակոբ Ծերակոյսի վարժարանը 50 ուսանող, Ս. Խաչ վանքի վարժարանը 50 ուսանող, Ս. Աստուածամայր Ա-մասիոյ վարժարանը 50 ուսանող, Ս. Գէորգ Լուսաւորչի վարժարանը 50 ուսանող, Ս. Գէորգ Ղարաղաչ

մանատարը՝ Վիլհելմ կայսրի յանձնարարութեամբ տալով չքանչանը բարոն Բէկին՝ ասաց, որ այդ բարձրագոյն պատուանշանը չնորհուում է նրան այն կարևոր ծառայութիւնների համար, որ մատուցել է բարոնը գերմանական զօրքին։ Գերմանական զօրքի հրամանատարի այդ խօսքերին Վիեննայում զանազան բացատրութիւններ են տալիս։ Զօրախաղերի գործած տպաւորութիւնը չատ լաւ է. ժողովուրդը ոգևորութեամբ է վերաբերւում դէպի այդ զօրախաղերը։ Աչքի է ընկնում հեծելազօրքի գեղեցիկ կազմակերպութիւնը։

Մի քանի ունգարական լրագրապետներ ցանկացել են իմանալ ուսաց և ֆրանսիական պինուորական ներկայացուցիչների կարծիքը և ստացած տպաւորութիւնները աւստրո-ունգարական զօրախաղերի մասին։ Ուսաց ներկայացուցիչը հրաժարուել է կարծիք յայտնելուց, ասելով՝ թէ ինքը միայն կարող է և պարտաւոր է բացատրութիւններ տալ իւր կառավարութեանը և ոչ այլ ոքի. համարեա նոյնն ասել է և ֆրանսիական ներկայացուցիչը, բայց և այնպէս արտայայտել է իւր գոհունակութիւնն աւստրիական հեծելազօրքի գեղեցիկ կազմակերպութեան և բարձր յատկութիւնների մասին։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական լրագիրները, բացի պաշտօնական և սոցիալական թերթերից, մեծ կարևորութիւն են տալիս այն առաջարկութեանը, որ արել է Վիլհելմ կայսրն իշխան Բիսմարկին՝ գալ բնակուել կայսերական դղեակներից մինում իւր առողջութիւնը վերականգնելու համար։ Այդ առաջարկութիւնը համարում են կայսրի իշխ. Բիսմարկի հետ հաշտուելու նշան, և ցաւում են, որ իշխ. Բիսմարկն կայսրի առաջարկութիւնը չէ ընդունել։ Ենթադրում են, որ թէպէտ իշխանին չի վերադարձնուել իւր առաջուայ պաշտօնը, սակայն նրան մի պատուաւոր դիրք ու զբաղմունք կըտրուի։

—Ուսաց նաւատորմղի Տուլոն այցելելու մասին անգլիական «Daily News» նշանաւոր թերթն այն կարծիքն է յայտնում, թէ այդ այցելութիւնը քաղաքական նշանակութիւն չունի, այլ երկու պետութիւնների՝ Ուսաստայի և Ֆրանսիայի մէջ եղած բարեկամական արտայայտութեան արդասիք է։ Ֆրանսիայում տիրող ոգևորութիւնը լրագիրը բնական է համարում, քանի որ մինչև այժմ Ֆրանսիան ամբողջ Եւրոպայում մենակ է եղել, ոչ մի դաշնակից և կամ իրեն համակրող պետութիւն չի ունեցել. ուստի այժմ սիրով ընդունում է Ուսաստայի բարեկամական արտայայտութիւնը։ Ապա լրագիրն աւելցնում է, որ Գերմանիայում տեղի ունեցած իրողութիւնները բնականապէս պիտի Ֆրանսիային գուդուէին և տեղիք տային աւելի ոգևորութեամբ և ջերմ սրտով ընդունելու ուսաց ծովագնացներին։

—Չեխական յուզումներն օր աւուր ծայրահեղ կերպարանք են ստանում։ Աւստրո-ունգարական կառավարութեան Պրագում գործ գրած խստութիւններն աւելի են գազանում չեխերին։ Մլադոչեխեան մի քանի նշանաւոր պատգամաւորներ կամենում են հեռանալ պատգամաւորների ժողովից և կառավարութեան հակառակ դիրք բռնել։ Չեխական պատգամաւորներն՝ իրենց ապագայ բռնելիք ընթացքի մասին վերջերումս հաւաքուած են եղել խորհրդակցելու, սակայն ոստիկանութիւնը ներս է խուժել ժողովատեղին և բռնի կերպով բոլոր ժողովականներին դուրս արել։ Այդ բանի վրայ չեխերն աւելի են գազանել։ Նոյն իսկ սաարոչեխեան լրագիրները, որ մինչև այժմ յօգուտ կառավարութեան էին խօսում, այժմ խիստ վիրաւորուած՝ պահանջում են չեխական ազգային արժանապատուութիւնը վերականգնած տեսնել։ Չեխական հարցի մասին պատգամաւորների ժողովին երկու ծրագիր է առաջարկուելու։ Հաւատացնում են որ դրաֆ Տաաֆէլի դրութիւնը չեխական հարցի պատճառով խախուտանում է։ Գուցէ նա ստիպուած լինի մինչև առաջիկայ գարուն հրաժարական տալ։

— Գերմանական կառավարութիւնը մտադրութիւն ունի Ֆրանսիայի սահմանի վրայ նոր բերդեր չինել։ Այդ միտքը վաղուց արծարծուած էր, սակայն միջոցի սղութեան պատճառով մինչև այժմ մնում էր աւելիս։

—Ֆրանսիայի և Բելգիայի հիւսիսային նահանգների ածխահանքերի բանուորները գործադուլ են արել։ Գործադուլից առաջ Պա-դը-Կալէ նահանգի ածխահանքերի բանուորները մի առանձին ծրագիր և առաջարկութեան մի ցուցակ էին կազմել և առաջադրելով հանքատէրերին՝ խնդրել էին իրագործել իրենց պահանջը, որ ոչ միայն չի ընդունուել, այլ և մինչև անգամ չի էլ կարդացուել նրանց առաջարկած թուղթը։ Այդ առաջարկութեան մերժուելուց յետոյ գործադուլն սկսուած յայտարարուեց։ Գործադուլ անողների թիւը 4000-ի է հասնում, սակայն հնթադրում են, որ այդ թիւը կը բազմապատկուի. չուտով դրանց հետ կը միանան միւս շրջանների բանուորները։ Մի քանի տեղեր անկարգութիւններ են տեղի ունեցել։

—Աֆրիկայի դերվիշները մտադիր են եգիպտոսի հետ պատերազմ սկսել։ Սուդանից գրել են գերմանական մի լրագրի, թէ մահդի Աբդուլլահը առաջարկել է Հաբեշստանի նեգուսին՝ եգիպտոսի հետ դերվիշների հետ ունեցած պատերազմի ժամանակ չեզոք մնալ։ Նեգուսը չատ զգոյշ պատասխան է տուել, ասելով՝ թէ որովհետև եգիպտոսի դէմ պատերազմ սկսելը չատ վտանգաւոր է, քանի որ այդ պատերազմին կըմասնակցեն եւրոպական մեծ պետութիւնները, ուստի ինքը մահդիին մի որոշ պատասխան տալուց առաջ՝ նախ պիտի դիմէ իւր եւրոպական բարեկամներին խորհուրդ հարցնելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանագէտ Ֆրէդրէխ Նիցշէ.— Ֆրանսիական լրագիրները խօսում են Ֆրիդրիխ Նիցշէի մասին, որի անունը Ֆրանսիայում դեռևէ անյայտ է։ Նիցշէի բոլոր փիլիսոփայութիւնը կարելի է հետևեալ երկու կէտը պարտադրել. 1) «Ոչինչ ճշմարիտ չէ, ամեն ինչ ենթադրելի է». 2) «Ճշմարտութիւնը, բարոյականութիւնը, բարութիւնն այնպիսի բաներ են, որոնք կորցրել են իրենց բոլոր նշանակութիւնը»։ Այդպիսով Նիցշէն բոլոր յոռետեսներից (պեսսիմիստներից) էլ հեռու է գնացել—նա փիլիսոփայ-ոչնչական է կամ, ճիշտն ասած, ցինիկ։ Բայց Նա Գերմանիայում մեծ ազդեցութիւն ունի։ Արդէն տաս տարի սրանից առաջ Նիցշէն իւր փիլիսոփայական թէօրիաների պատճառով ստիպուած էր Թողնել Բազէլի համալսարանում ունեցած ամբիոնը. նա սկսեց ճանապարհորդել, բայց նրա ջղերն այնպիսի ողբալի դրութեան մէջ էին, որ նա ստիպուած էր չարունակ իջևան ընդունել, և 1889 թուին նրան խելագարատուն տարան, ուր նա չորս տարի ապրում էր։ Այժմ որովհետև նա բոլորովին հանդիստ է և ոչոքի վնաս չի պատճառում, ուստի նրան յանձնել են իւր մօր հոգատարութեանը, որի հետ նա ապրում է Սաքսէն-Վայմարի մի փոքրիկ քաղաքում, Նաումբուրգում։ Այնտեղ, ի հարկէ, ոչոք չի էլ իմանում, թէ ինչպիսի որդի է ապրում իւր մօր մօտ, և այն ծամանակ, երբ մայրը ամեն երկրից նամակներ է ստանում, որոնցով նրա որդու առողջութիւնն են հարցնում, որդին ամբողջ օրը նստած է բազկաթոռի վրայ և օրական 15—18 ժամ նիրհում է։ Ամեն մի չնչին բան Նիցչէին սարսափ է պատճառում, և նա արտասուում է։ Երբեմն նա չի ուզում սենեակ մտնել, այդպիսի դէպքերում մի միջոց է միայն գործադրւում. մայրը կանգնում է իւր թանկագին որդու առաջ և կամաց կարդալով գերմանացի կլասիկներից որևէ կտոր գրնում է դէպի սենեակը։ Նիցչէն, չհասկանալով կարդացածի իմաստը, բայց գրաւուելով ոտանաւորի հանգերից, հետևում է մօրը։ Դիշերները, երբ ամենքն արդէն քնած են լինում, փիլիսոփան երբեմն ուշքի է գալիս. նա կանչում է մօրը և ասում է նրան չարունակ միևնոյն խօսքը. «Մայրիկ, ես յիմար եմ»։ Դու նշանաւոր մարդ ես,—պատասխանում է թչուառ մայրը։—աշխարհիս բոլոր մեծ մարդիկը կարդում են քո գրածները»։ «Մայր, ես յիմար եմ,—կրկնում է Նիցչէն միշտ միևնոյն խօսքը։ Տիկին Նիցչէն պատմում է, որ մօաերքս որդին ասել է իրեն. «Մայր, ես ոչինչ չէի հասկանում, և նրանք էլ ինձ չեն կարող հասկանալ»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 սեպտեմբերի.—Նոցին Կայսերական Մեծութիւնները երէկ ներկայ էին «Ուսալկա» նաւի մահացած սպաների և նաւաստիների համար կոպենհագենի եկեղեցում կատարուած հոգեհանդստին։ Նոյն սպաների և նաւաստիների համար այսօր հոգեհանգիստ կըկատարուի Պետերբուրգում, ծովակալութեան եկեղեցում։

Թագաւոր Կայսրը ծովային մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ Կրեմերին Ֆրեդենսբորգից հեռագրել է. «Ուսալկայի» մասին լուրը խորապէս ազդեց և տխրեցրեց ինձ. հեռագրեցէք ինձ ամեն բան, ինչ որ կըյայտնուի յետագայ հետախուզութիւններից»։

Կրեմերը ֆրանսիական ծովային մինիստրից հետևեալ հեռագիրն է ստացել. «Հաճեցէք ընդունել այն խորին վշտի արտայայտութիւնը, որ ես ֆրանսիական բոլոր նաւատորմղի հետ զգում եմ, իմանալով ռուսաց նաւատորմղին ցաւ պատճառող վշտալի անցքը»։

«Прав. Вѣст.»-ը հաղորդում է, որ «Ուսալկա» նաւը գտնելու համար արած հետախուզութիւնները մինչև օրս անհետևանք են մնում. «Ուսալկայի» Ռևելից ճանապարհ ընկնելուց առաջ և յետոյ եղած բոլոր հանգամանքները բացայայտելու համար քննիչ յանձնաժողով է նշանակուած։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ ի նկատի ունենալով «Ուսալկայի» պատճառով ռուսաց նաւատորմին հասկած սուգը, Պետերբուրգի ֆրանսիական դաղութի մի քանի ներկայացուցիչներ վճռել են ռուսաց նաւատորմին Ֆրանսիայում ընդունելու համար կազմուած ֆրանսիական մամուլի մասնախմբին առաջարկել, որ ռուս ծովագնացներին նուէրներ տալու և նրանց ընդունելութեան համար հաւաքուող փողերի դէմ մի մասը յատկացնուի «Ուսալկայի» մահացած սպաների և նաւաստիների այրիների և որբերին, նոյնպէս մահացածներին արձան կանգնեցնելու օգտին։

ԲՈՐՍԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 սեպտեմբերի

—

Մուրհ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում	10 ֆ.	
ստեր. համար	95₁₆₅	ծախ. 95₁₆₅ առք.
Բերլինի 100 մար.	46₁₇₂½	— 46₁₇₈ —
Վարիզ 100 ֆրանկի.	37₁₆₂	սակ.
Մուրհ. կուրսի. տրամադր. բանակ. ամուր է.		
Նոր կտրած պոլտիպ.	7₁₆₅	սակ.
Մաքսային կտրոնը (100 մեծաղ. րուբլուն)...		
. . .	153₁₆₂	առք.
Արծաթը . . .		—
Բորսային զեղչը .	5 մինչև	6½%
Գետ. բան. Ա. հրատ. 5% տոմս.	103½	սակ.
2-րդ . . .	103⅝	—
1883 թուի 6% սակաւ բեռնար.	157½	սակ.
1884 թուի 5% — —	161½	սակ.
Արևելեան փոխ. 100 և 1000 րուբլիանոց 5% Բ. հրատ.	101	առք.
,, ,, ,, Դ. հրատ.	102	—
1864 թ. Ա. Ներքին փոխառու. վիճակահան. 5% տոմսեր .	241	—
1866 թ. Բ. ,, ,,	218	—
Ալքունի երկաթուղային բեռնար	103	առք.
Ներքին փոխառ. 4% I սերիան	94½	առք.
,, ,, II սերիան	94½	սակ.
,, ,, III սերիան	94⅜	—
,, ,, IV սերիան	94⅜	—
4½% երկաթուղ. փոխ I հրատ.	99½	սակ.
,, II հրատ. 1893 թ.	—99½	—
Ազն. կալ. բան. 5% գրաւաթ.	100½	—
,, ,, 4½% —	99½	—
Արք. ազն. կալ. բան. 5% վճահանութեան տոմսերը .	193½	սակ.
4½% շինական հոդ. բանկի վկայ.	99½	—
Հարաւ-Արևմտեան երկաթուղ.		
4% օբլիգացիան . .	94	ծախ.
Մոսկուա-Ռիազանի . .	92	սակ.
Ռիազան-Ուրալի . . .	—	—
Կուրսկ—Կիևի . . .	99	ծախ.
Կալ. փոխադ. վարկի ընկեր.		
4½% ընկեր. գրաւաթղթերը	154½	առք.
5%	100½	—
Պետերբուրգի քաղ. վարկի ընկ.		
5% օբլիգացիան . . .	101½	առք.
Մոսկուայի . . .	100½	առք.
Օդեսսայի 5½% . . .	100⅝	—
Թիֆլիսի	98½	սակ.
Լենտասանի կալ. բանկի 5% գրաւաթղթերը . . .	101	ծախ.
Խերսոնի նահանգի կալ. բանկի 5% 5½ գրաւ. թղ.	100½	սակ. 99⅞ սակ.
Խարկովի կալ. բանկի 5% .	100½	—
Գալատայի . . .	99⅝	առք.
Ցուլայի . . .	99⅞	—
Կիևի	100½	առք.
Մոսկուայի . . .	99⅞	—
Բեսարարիա—Ցարիկեան .	100½	—
Նիժն.—Սամար. . .	100½	—
Դոնի	99½	—
Վիլնայի . . .	99⅞	—
Թիֆլիսի 5% և 6% .	100½ և 100	ծախ.
Քուրսկի . .	100½ և 100	—
Ակցիաների գները . .	458	սակ.
Միջազգային առևտրական .	471	—
,,Արտ. առևտր. ռուս, բանկի	293	—
Վոլգա-Կամայի առևտրակ. .	873	առք.
Սիբիրի բանկի. . .	640	—
Բեսսարաբ.—Ցարիկ. .	587	ծախ.
Խարկովի կալուածական .	510	—
Կիևերը.-Ցուլայի . .	425	—
Գալատայի . . .	615	ծախ.
Նիժեգորոդ.-Սամարայի .	640	—
Վիլնայի . . .	610	—
Դոնի	715	առք.
Կիևի	812	ծախ.
Մոսկուայի . . .	614	առք.
1827 թ. կրակից ապահովուող ռուսաց ընկերութիւն .	1170	ծախ.
Հիւսիս. ապահովուող ընկ. .	—	—
,,Ռոսսիա'' ,, ,, .	306½	սակ.
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն .	700	ծախ.
,,Կաւկազ և Մերկուրի'' ընկ .	402	—
Ռուս. երկաթ. գլխ. ընկեր. .	243	—
Մոսկուա-Ռիազանի երկաթ. .	475	առք.
Կուրսկ-Կիևի . . .	383	—
Ռըբինսկ-Բոլոգովի . .	82⅝	սակ.
Գրեազ-Ցարից. . .	157½	—
Հարաւ-Արևմտեան . .	112½	—

Բորսայի տրամագրութիւնը խաղաղ է։

Խմբագիր—հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անցեալ տարի, մինչև խոլերայի երևալն, Հանրամատչելի բժշկարանի առաջին հատորի էլէկտր պեռոշին մամուլի տակն էր և արդէն 7 թերթ տպագրուած էր, (ի միջի այլոց խոլերային վերաբերեալ բաժինը 33 երես), այնուհետև ևս այլ ևս չկարողացայ վերահասու լինել տպագրութեանը՝ պաշտօնական գործերով խիստ զբաղուած լինելու պատճառով. այժմ հանգամատարար ազատ ժամեր ունենալով, չարունակելու իմ բուժշկարանի տպագրութիւնը և յուսով եմ առաջին հատորը լիովին տպագրութեամբ վերջացնել մինչև 1894 թ. մարտ ամիսը. խոլերայի մասին արդէն տպագրուած 33 երեսը նորից կրտպագրուի՝ փոփոխութեամբ գիտութեան այժմեան հայեացքի համեմատ։ Երկրորդ հատորի տպագրութիւնը միայն կարելի կըլինի չարունակել, եթէ բաժանորդներիս թիւը (այժմ 273 է) հասնի 500-ի, ինչպէս որ առաջ յայտարարել էի այդ մասին, հակառակ դէպքում բաժանորդներիս վերադարձնելու իմ երկրորդ հատորի բաժանորդագինը, այն է՝ 1 ր., 50 կ.։

Իմ հասցէն. Помощнику Елизаветпольскаго губернскаго врача по медико-врачебной части доктору медицины Теръ-Григорьянъ, въ г. Елизаветполь.

Բժշկապետ Տէր-Գրիգորեանց Քրիֆլիսեցի.

Գանձակ, 12 սեպտեմբերի

Երկաթուղի

Թիֆլիսից Բաթում է գնում մարդատար № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 30 ր., և Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Թիֆլիսից Բաթում է գնում № 4 պոստային գնացքը, երեկոյեան 6 ժ. 50 ր., և Բաթում է հասնում առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Թիֆլիսից Բագու է գնում պոստային № 3 գնացքը՝ ցերեկը ժամը 1-ից 20 ր. անց։

Բաթումից գուրս է գալիս մարդատար № 1 գնացքը առաւօտեան 9 ժ. 45 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում երեկոյեան ժամը 9-ից 52 ր. անց։

Բաթումից գուրս է գալիս պոստային № 3 գնացքը գիշերուայ ժամը 11-ից 25 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում ցերեկը ժամը 12-ին 25 ր. անց։

Բագուից պոստային № 4 գնացքը գուրս է գալիս գիշերուայ ժամը 11-ից 10 ր. անց և Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 5-ից 50 ր. անց։

ԱՄԱՐԱՆՈՑԱՑԻՆ ԳՆԱՑՔ

Թիֆլիսից Միխայլովո գնում է № 24 գնացքը հաշից յետոյ ժամը 3-ին։

Միխայլովից Թիֆլիս է գալիս առաւօտեան ժամը 8-ից 10 րոպէ անց։

Թիֆլիսից Գանձակ գնում է № 47 գնացքը երեկոյեան ժամը 9-ից 20 րոպէ անց։

Գանձակից Թիֆլիս է գալիս № 48 գնացքը ցերեկը ժամը 1-ից 30 րոպէ անց։

ՕԴՍՍՍԱՑԻՑ գալիս է ԲԱԹՈՒՄ

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, շոգենաւու ընթացքով, բոլոր նաւահանգիստներն է մանում։

Ուրբաթ օրերը՝ առաւօտեան, ճեպընթաց, նալիա և Սեաստոպոլ հանդիպելով։

Երկուշաբթի երեկոյեան, շոգենաւու ընթացքով, մանում է բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Նովորոսիյսկի և Կերչի վրայով։

Պաստառին կատերի

Երթեւեկութիւնը Թիֆլիսի եւ Վլադիկաւկազի միջեւ մայիսի 1-ից սկսած մինչեւ նոյեմբ. 1-ը։

—

ԹԻՖԼԻՍԻՑ գուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կ ա ր ե տ ը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Առաւօտեան ժամը 9-ին հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Կասանաւար կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 10-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 3-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (ամիերուսը). առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 5-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Վլադիկաւկազ։

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Դուշաւրում և միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 3-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 5-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 8½-ին հասնում է Թիֆլիս։

Հոգենաւերի



Երթևեկութիւնը մայիսի 8-ից սկսած.

ԱԳՐԱՆԲԱԿԻՐ ՄԱՐԴԱՏԱՐ ԴԻՒ

Բաթումից գնում է ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6-ին և հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Բաթում գալիս է հինգշաբթի օրերը, կէս օրուայ մօտերքը։

Փոթից գնում է Օդեսա ուրբաթ օրերը գործերը վերջացնելուց յետոյ։

Փոթից գնում է Բաթում՝ հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9-ին։

Փոթի գալիս է երեքշաբթի օրերը ցերեկը՝ Օդեսայից։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւերում ընդունուղ II և III կարգի ճանապարհորդները կերակրեղէն չեն ստանում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ դուրս է գալիս դէպի ՕԴԵՍՍԱ

Շաբաթ օրը՝ լոյս կիրակի, ժամը 2-ին, շրջանառու ընթացքով մտնում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրը՝ գիշերուայ 11½-ին, ճեպընթաց նաւը և մտնում է միայն Նովոռոսիյսկ։

Երեքշաբթի օրը՝ գիշերուայ ժամը 2-ին, շրջանառու ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ն, դուրս է գնում դէպի Ն. Պօլիս՝ երկու շաբաթը մի անգամ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՓԱՌՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
(Հայոց թագաւորների պատկերներ)

Գինն է 100 հատ—60 րուբլի
10 . . — 6 րուբլի
1 . . — 1 րուբլի

Ծանապարհածախսը իմս է։

Ցանկացողը կարող է վերագիր վճարով ստանալ։

Դիմել՝ Москва, армянская церковь, Ивану Гечеву.

(485) 5—1

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇՄԻՏՑ

Ընդունում է աչքացաւ ունեցող հիւանդներին՝ ժամը 9 — 11 առ., կանանց ներքին ցաւ ունեցողներին՝ ժամը 3—4 եր.։

Միքայէլեան փողոց № 94.

(257) 10—5.

«ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ» ՖՈՆԹԵՐԻ

Դասագիրք պատկերներով, թարգ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ. Գինը 50 կոպ., զեղջը 20%։ Վաճառւում է Կեդրոնական գրավաճառանոցում։

(484) 2—2

«ԴԱՍԱԽԱՆԴՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ»

Աշխատասիրութիւն ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՐԿԵԱՆՑԻ. գինը 30 կոպ.։ Վաճառւում է Կեդրոնական գրավաճառանոցում։

(484) 2—2

ՊԱՐԲԵՐԻ

ՈՒՍՈՒՑԻՉ ԿՈԶԼՈՎՍԿԻ

(Սոլդատսկայա փ. № 1, տ. Բաքանասեանի, Գոլովինսկու անկիւն, պոստային կայարանի դիմաց)։

36 դասով սովորեցնում է բալի ՀԻՆԳ ամենահարկաւոր պարը։ 12 դասի համար վճարում են 4 րուբլի։

(259) 2—2

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

այսուհետև ինձ հետ գործ ունեցողներին դիմել ոչ թէ «Շիրակ» գրավաճառանոցին՝ այլ ուղղակի իմ հասցէով՝ Александрополь, Г. Левонянъ։

(474) 10—6

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ

ՈՒՂԵՑՈՒՈՒԹԻՒՆ

Գինն է 50 կոպէկ, իսկ ճանապարհածախսով 65 կ.։

կազմեց Մ. ԱՒԵՂՅԱՆ

Վաճառւում է «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

20—9.

ԽՈՏԵՐԻ ԿԱՐԱՄԵԼ

Հաչէ ԵԷՀ

„ԿԵՏՏԻ ԲՈՍՍ“

Բ. ՍԵՄԱԴԵՆԻ ԿԻԵՒՈՒՄ։

Գլխաւոր պահեստը Ալէքսանդր Վենցելի մօտ, Պետերբուրգում, Բոլոխովայա, 33. Վաճառւում է Թուսլիայի բոլոր գեղատներում և գեղատ. խանութներում։

(M.) 20—1

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵԴՓԵՐ»

խրատական գրուած՝ օնանականութեամբ իրենց ջղային կազմուածքը խանգարածների համար։

հեղ. Դ-ր ԼՕՐԵՆՑԻ

ռուսերէն հրատարակութիւն Դ-ր Բ-լի։ Գինն է 1 րուբ.

Այս օգտաւէտ գիրքը պարունակում է իւր մէջ չատ խրատներ, թէ՝ ինչպէս կարող են ազատուել հիւանդները վերոյիշեալ ախտի վնասակար հետևանքներից և վերականգնել խանգարուած ոյժերն ու առողջութիւնը։ Այս գիրքը թարգմանուած է Մոսկուայի գրաքննական կոմիտէից։

Հրատարակութեան պահեստն է Օտտօ Ասպերգէրի մօտ Լայպցիգում (Otto Asperger Leipzig) (Սաքսօնիա)։ Օտարաքաղաքացիները ճանապարհածախս չեն վճարում։

(M.) 36—6

ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

ՏԵՍՆԵՐԿՈՒԵՐՈՒՄ ՏԵՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներին ստանում են *ատեստատներ*։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սօլօլակում՝ Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ. С. П. Мануэльянцу.

(443) (25—22)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Քաղաքում չարունակուող ասիական խոլերայով հիւանդանալու դէպքերը սոսկալով օգնութեան հասնելու այդ հիւանդութիւնից վնասուող անձերի ընտանիքներին, ընդ սմին սոսկալուած ենք առանձին ուշք դարձնել քաղաքիս սմնակաչառու բնակիչների կերակուրը լաւացնելու վրայ, ինչպէս խոլերայի համաճարակի դէմ կռուելու սմենալաւ միջոցներից մէկի վրայ։

Այդ նկատմամբ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը պատիւ ունի հաղորդելու ի գիտութիւն խոլերայի դէմ կռուելու գործին ըստ չափու կարողութեան օգնել յանկացող անձերի, որ Թիֆլիսի պ. նահանգապետի Թոյլտուութեամբ քաղաքային վարչութեան մէջ դրամական և նիւթական օժանդակութիւնների ընդունելութիւն է բացուած ձրի թէյարանները և ճաշարանները պահպանելու և նորերը բանալու, նոյնպէս և խոլերայից մեռած անձերի ընտանիքներին օգնութիւն հասցնելու համար։

Դրամական օժանդակութիւնները ընդունւում են ամեն օր, բացի սուն օրերից, ցերեկուայ ժամը 9-ից մինչև 2-ը քաղաքային վարչութեան մէջ, իսկ նիւթական օժանդակութիւնները — ամեն օր՝ ցերեկուայ ժամը 9-ից մինչև 2-ը և երեկոյեան ժամը 4-ից մինչև 7-ը Հաւլաբարի ճաշարանում, Կախէթեան հրապարակի վրայ։

(Խմբ.)

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶԻՈՆԻ ԵՒ ՌԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՁՈՐՈՒ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ։

Տեղափոխուեց Դանովսկայա փողոց №. 11. սեփական տուն.

Ընդունում է աշակերտներ պատրաստելու գիմնազիոնի, ռէալական ուսումնարանի, կադետների կորպուսի մինչև չորրորդ դասատունը, երկրաչափական և տեխնիքական ուսումնարանների համար։ Ուսումնարանին կից կայ մանկական պարտէզ։

Ուսումնարանում կըդասախօսեն գիմնազիոնի ուսուցիչներ։

(477) 10—7

ՇԱՔԱՐԻ ԵՒ ՇԱՔԱՐԱԻԱԶԻ

„ԻԶԵՔՈՎ“

ԴՈՒՐԹԵՐԸՆԻ ԸՆԿԻՈՆԵՐԸՆԿՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Սրանով յայտարարում է, որ քացառապէս կայսերութեան մէջ եւ Լիհաստանում

ՊՏՈՒՂՆԵՐԻ ԻԶՈՓԵԱՆ ԿՈՆՓԵԿՏՆԵԸ

վաճառելու համար ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼ հաստատուած է

1-ին գիլդիի վաճառական

Ի. ԳԵՐՇՏԷՅՆ

որ ապրում է Վոլշաւսա, Պերեխոդնայա փողոցում № 5.

(244) 8—6

ԶՈՒՒ ՍԱՓՈՆ

ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО. ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.

Ա. ՄՐՈՒԵԱՆՑ ԸՆԿ.

(M.) 52—31

ԴՈՒԻ ԽԱ

„ԿԱՊՐԻԶ ՕԴԸ-ԿՕԼՕՆ ՆԵՒԱՅԻ“ ՍԿԶԲՆ

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Կապրիզ Նևայի» «Կապրիզ Նևայի» «Կապրիզ Նևայի»

«Մխալ Դուխի» Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ «Մխալ Սապօն»

ՏԵԽՆԻԿ-ՔԻՄԻԿԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

„ԿԱՊՐԻԶ ՆԻՒՅԻ“ զանգուածները գերազանցում են ընտիր յատկութիւններով և պատրաստուած են Զիկգրի համաշխարհահռչակ համար

ՊԱՀԵՍՏՆԵՐ Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ալէքսանդրինեան թատրոնի հրապարակ. 9.

„ ՄՈՍԿՈՒԱ, Նիկոլաևսկայա, տ. Շերեմետևի։

„ ՎԱՐՇԱՒ, Նովի Սվետ, 37. և Կայսրութեան ամենալաւ մագազիններում

(M). 50—26

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET CIE

ՆԱՒԱԴՆԱՅՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷԼ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու շաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԵԼ։

Բաթումից Մարսէլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիջումն ունին։

Բաթումից մեկնում է՝

Զորեքշաբթի, 22 սեպտ. 4 հկտ. չոգենաւ «Արմենիա», կապիտան «Տիբալ» և այդ օրերը չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ երկու շաբաթը մի անգամ, սէս որոշուած կարանտինային միջոցների պատճառով կարելի չէ նախօրօք ճշտիւ որոշել չոգենաւերի Բաթումից մեկնելու օրերը, ուստի պէտ մասին տեղեկութիւններ ստանալու համար թոյլ բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին։

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՒՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։

Թիֆլիսում—պ. ԲԱԲԿԵՆԴԱՆՑԵԱՆՑԻՆ, Սիօնի փողոց, քարուանսարայ Գէորգ աղայի։

Բաթումում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։

Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌՈՆՈՅԻՆ։

Չիկատլի յուցահանդէսը գնալ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւններ թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւրից չոգենաւի մեկնելու ժամանակի մասին

(257) 20—11

Доз. Цензурою Тифлисъ, 16-го Сентября 1893 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.